

## Քանավէճը Կը Շարունակուի

### ՆԱՄԱԿ՝ ԱԻՍՏՐԱԼԻԱՅԵՆ

«Մելգոնեան» վարժարանի փակման հարցով մեր թերթին սիւնակներուն մէջ կայացած քանավէճը արժանացած է ոչ միայն Մելգոնեանցիներու, այլ նաև Քարեգործականի զանազան վարժարաններուն հետ գործ ունեցող մեր ազգայիններուն ուշադրութեան: Կը տեղեկանաք թէ Մելգոնեանցիները «Փրկենք Մելգոնեանը» անուանուած իրենց կայքէջին մէջ տեղ տուած են նաև Մարմարա-ի հեռացանցի կայքէջին, որպէսզի համակիրները հետեւին այս նիւթի շուրջ բացուած քանավէճին:

Միւս կողմէ Աւատրալիոյ Սիտնէյ քաղաքի մեր ընթերցողներէն Վարդան Սրկ. Էլմասեանէն ստացանք սրտցաւ նամակ մը, որ գաղափար կուտայ թէ ամենուրեք ինչպիսի տագնապներ ապրիլ սկսած են Քարեգործականի կապուած կամ Քարեգործականի հետ կապ չունեցող մեր վարժարանները:

\*

Յարգելի եւ Սիրելի Պր. Ռ. Հատուէճեան,

Մօտաւորապէս շաբարէ մը ի վեր հետաքրքրութեամբ կը կարդամ Մելգոնեան վարժարանի կապակցութեամբ գրուած գրութիւնները: Պիտի ուզէի ձեզի քիչ մըն ալ տեղեկութիւն տալ մեր Սիտնէյի Քարեգործական Միութեան «Ալեքսանտր» Ամենօրեայ նախակրթարան վարժարանին մասին: Այս վարժարանը բացուեցաւ 1990ին 10 աշակերտով որոնցմէ մեր անդրանիկ զաւակը այս դպրոցի առաջին արձանագրութիւնը ունեցողն է: 1986ին ազգային բարերար Պր. Ալեք Մանուկեան 600 հազար ամերիկեան տոլար դրկեց եւ ասով 5 արտավար հողաշերտ գնուեցաւ: Մեր մեծ բարերարը մի քանի տարի ետք 1.000.000 տոլար եւս դրկեց, եւ այս անգամ շենքը կառուցուեցաւ եւ այդ շենքին կառուցման գինը բարձրացաւ 2.200.000.000 տոլարի: Նոյն ժամանակ տեղույն ժողովուրդն ալ ձեռքէն եկածը ըրաւ նիւթական իմաստով: Յաջորդական տարիներուն աշակերտներուն թիւը բարձրացաւ 65ի, բայց այս 15 տարիներու ընթացքին հոգաբարձութեան կարգ մը սխալ տնօրինութիւններու հետեւանքով այսօր աշակերտութեան թիւը ինկաւ 29ի: Քարեգործականի կեղրոնական վարչութիւնը այս երկու տարիներու ընթացքին Սիտնէյի մասնաճիւղին նամակ ուղարկեց «դպրոցը գոցեցէք» լսելով:

Այս դպրոցին տարեկան ծախսն է 200.000 տոլար, կառավարութիւնը իւրաքանչիւր աշակերտի համար 4-5 հազար տոլարի չափ կարեւոր յատկացում կ'ընէ եւ ասոր փոխարէն Կեդրոնական Վարչութիւնը «դպրոցը գոցեցէք» կ'ըսէ: Ի՞նչ դիմիին է, չէ՞ դպրոց գոցելը, փոխանակ հարցնելու տեղույն վարչութեան թէ ինչո՞ւ աշակերտութեան թիւը չի բարձրանար: Այս է այսօրուան Քարեգործականի նախընտրած քաղաքականութիւնը: Միւս կողմէ, եթէ դիմուլու ըլլանք, Սիտնէյի մէջ Համազգայինի եւ Հայ Կաթողիկէ համայնքի ամենօրեայ վարժարաններէն

իւրաքանչիւրը աւելի քան 200 աշակերտութիւն ունի: Մերիններուն թիւը ինչո՞ւ չի բարձրանար: Չի բարձրանար: Եւ վստահ ենք որ պիտի չբարձրանայ, եթէ այս մտայնութիւնները շարունակուին: Աւելի առաջ Պր. Հայկաշէն Ուզունեանն ալ գրած էր մեր Սիտնէյի Ալեքսանտր վարժարանի կապակցութեամբ, երբ Մելգոննեանի մասին դիտողութիւն մը կ'ընէր: Մամուլին մէջ կարդացի...: Տարիներով Բարեգործականը աշխարհացրի մեր ժողովուրդէն միլիոններ առած է իրեւ կտակ կամ նուիրատուութիւն եւ այսօր ցաւալի է որ աւելորդ դրամ չկայ դպրոցներուն համար ու զանոնք գոցեցէք կ'ըստն: Մանաւանդ Մելգոննեանի պէս հեղինակաւոր եւ նշանաւոր հաստատութեան մը պարագային: Ասկէ ետք հայ ժողովուրդը Բարեգործականի կամ նմանօրինակ միւս հաստատութիւններու ի՞նչպէս նոր կտակներ պիտի վստահի, Սփիտքահայ վարժարաններու ի նպաստ:

Յարգանօր՝

**ՎԱՐԴԱՆ ՄՐԿ. ԷԼՍԱՍՏԵԱՆ (Սիտնէյ)**